# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 21 - 22 (16620) ՇԱԲԱԹ, 17 ՄԱՐՏԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ՎՐԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ Է ՎԵՐԱՊԱՀՈՒՄ»

*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին մարտի 14-ին անցկացված կառավարության նիստում անդրադարձավ օրերս իր կողմից Ռուսաստանին՝ երկխոսության կոչով ուղղված ուղերձին՝ ի պատասխան ՌԴ ԱԳ-ի կողմից ստացված պատասխանի:*



Վարչապետը հայտարարեց, որ կառավարության յուրաքանչյուր քայլ, այդ թվում՝ նաեւ Ռուսաստանին հասցեագրված ուղերձը, ծառայում է երկրի շահերին:

- Այս օրերին բազմիցս անհեթեթ գնահատականներ եմ լսել իմ ուղերձի կապակցությամբ: Ցանկանում եմ հստակորեն հայտարարել, որ մեր յուրաքանչյուր քայլ ծառայում է երկրի շահերին, եւ երբ անհրաժեշտ է մեր երկրին, երբ խոսքը վերաբերում է առավել ծանր սաղրանքների կանխմանն ու երկրում կայունության ապահովմանը, մենք՝ քաղաքագետներս, պարտավոր ենք

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՆՇԱՆԱԿԱԼԻՑ Է, ՈՐ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԿՐԿԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

*Աշխատանքային այցով Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվող Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպումներ ունեցավ ԱՄՆ Կոնգրեսի եւ Սենատի մի շարք ներկայացուցիչների հետ:*




Վրաստանի նախագահը Ատլանտյան խորհրդի, ինչպես նաեւ NDI եւ IRI ղեկավարների հետ քննարկեց Վրաստան-ԱՄՆ ռազմավարական հարաբերությունների եւ Վրաստանի եվրատլանտյան ինտեգրման հետ առնչվող հարցեր: Կոնգրեսական Ջերալդ Քոնելի, սենատորներ Ռոբերտ Մենդելսի, Բոբ Քորքերի ու Ջին Շահինի հետ հանդիպմանը, կողմերը քննարկեցին Վրաստանի անվտանգության եւ երկրի առջեւ ծա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## ՀԵՆՁԵԼ ՄԿՈՅԱՆ. «ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԿԱՐՏՈՖԻԼԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ Է»

*Արդեն որերորդ տարին է, ինչ Ախալքալաքի եւ, ընդհանրապես, Սամցխե-Ջավախեթիի բնակիչները հայտնվում են լուրջ հիմնախնդրի առջեւ: Խոսքը վերաբերում է բավականին ծանր պայմաններում աճեցրած կարտոֆիլի՝ երկրամասի համար գլխավոր գյուղմթերքի իրացման հիմնախնդրին:*

Գաղտնիք չէ, որ երկրի տարածք ներկրվող հարեւան Թուրքիայի շատ ավելի անորակ, եւ իհարկե, զգալիորեն էժան պալարապտուղը շուկայում լուրջ մրցակցություն է ցուցաբերում Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ախալցիխեի, Ծալկայի՝ որակյալ եւ համեղ կարտոֆիլին: Ախալքալաքցիների համար աքիլլեսյան գարշապար հանդիսացող սույն հարցը մեկ անգամ չէ, որ բարձրացվել է թե՛ տեղական եւ թե՛ կենտրոնական իշխանությունների առջեւ:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԵՏ

*Մարտի 15-ին Քվեմո Քարթլիի տարածաշրջանի պետական լիազոր-նահանգապետ Գրիգոլ Նեմսաձեն, Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետ Թեմուր Աբազովի հետ, հանդիպում ունեցավ Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի բնակիչների հետ:*

Հանդիպմանը նահանգապետը, մունիցիպալիտետի եւ քաղաքապետի հետ միասին, մանրամասն տեղեկացավ բնակչության հուզող հիմնախնդիրներին եւ խոստացավ իրավասությունների շրջանակներում հնարավորինս կարգավորել դրանք: Հանդիպման ավարտին, նահանգապետին ներկայացրին Շահումյան ավանում ընթացիկ տարում ծրագր-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին շնորհավորական ուղերձ է հղել Արմեն Սարգսյանին Հայաստանի նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ:*





Վրաստանի նախագահի շնորհավորական ուղերձում մասնավորապես ասված է.

«Ցանկանում եմ սրտանց շնորհավորել Ձեզ Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվելու կապակցությամբ եւ հաջողություններ մաղթել Ձեր գործունեության մեջ:

Ուրախ եմ, որ վերջին ժամանակահատվածում Վրաստանի եւ Հայաստանի միջեւ երկկողմ հարաբերությունները զգալիորեն զարգացել են եւ դրականորեն նպաստել մեր ժողովուրդների բարեկամական շփումների ամրապնդմանը: Ես հավատում եմ, որ մեր երկրների միջեւ դարեր շարունակ ձեւավորված բարեկամական հարաբերությունները ապագայում եւս ավելի կզարգանան՝ ի բարօրություն մեր ժողովուրդների»:

## ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

### ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՆՈՐ ՇԵՆՔ ԿԿԱՌՈՒՑՎԻ

Մարտի 10-ին, Վրաստանի մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Գիորգաձեն, Հայաստանի մշակույթի նախարար Արմեն Ամիրյանի, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հետ այցելեց Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոն:



Ոչ պաշտոնական հանդիպմանը երկու երկրների մշակույթի նախարարները, թատրոնի գեղարվեստական ղեկավարի, թատրոնի տնօրենի, խմբի եւ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԴԵՍՊԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆՈՒՆ

*Մարտի 13-ին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հետ:*



Հանդիպմանը կողմերն անդրադարձան Վրաստանի եւ Հայաստանի միջեւ արդարադատության ոլորտում համագործակցության հեռանկարներին առնչվող մի շարք հարցերի:

Զրուցակիցները կարեւորեցին Վրաստանի եւ Հայաստանի արդարադատության նախարարությունների միջեւ փոխգործակցության խթանմանն ուղղված քայլերը:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ԾՐԱԳՐՎՈՒՄ Է ՓՈՔՐ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱԼԻՔԸ

*Մարտի 14-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին մասնակցեց «Վրաստանի կապիտալ» ներդրումային նոր ծրագրերի շնորհանդեսին:*



Ելույթ ունենալով միջոցառմանը՝ վարչապետը նշեց, որ երկրի կառավարությունը ծրագրում է փոքր գործարարության զարգացման երկրորդ ալիքը: Նրա խոսքով, գործադիր իշխանությունն աշխատում է այդ ուղղությամբ, եւ կանխագծվել են առանձին ուղղություններ:

- Մենք ծրագրում ենք փոքր գործարարության զարգացման երկրորդ փուլը, կապիտալի օգնություն ոչ միայն սկսնակ գործարարներին, այլեւ փոքր եւ միջին ձեռներեցներին: Այդ ուղղությամբ արդեն մշակվում են հատուկ ծրագրեր, կառավարության տնտեսական բլոկն արդեն աշխատում է այդ հարցերի շուրջ,- շնորհանդեսին հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

# ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՆՇԱՆԱԿԱԼԻՑ Է, ՈՐ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԿՐԿԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ռացած մարտահրավերների հարցերը: Միացյալ Նահանգների պաշտոնական ներկայացուցիչների կողմից կրկին ընդգծվեց ԱՄՆ-ի հաստատակամ պատրաստակամությունը՝ շարունակել աջակցություն ցուցաբերելը Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնմանն ու երկրի եվրատլանտյան ինտեգրման միտվածությանը:

ԱՄՆ կատարած աշխատանքային այցի ժամանակ, երկրի նախագահին ուղեկցում էին Վրաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Գիորգի Աբաշիշվիլին, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Դավիթ Ռեքվիաշվիլին, նախագահի միջազգային հարաբերությունների քարտուղար Թենգիզ Փխալաձեն, ԱՄՆ-ում Վրաստանի դեսպան Դավիթ Բակուրաձեն:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԵՎ ՑԽԻՆՎԱԼԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻՆ



Վրաստանի ժողովրդական պաշտպանին առընթեր, ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամ շուրջ 80 կազմակերպություններ Ռուսաստանին եւ Ցխինվալիի տարածաշրջանի հասարակայնությանը, պատասխանատու անձանց կոչ են անում անել ամեն հնարավորը, որպեսզի Արչիլ Տատունաշվիլու աճյունը անհապաղ փոխանցվի ընտանիքին:

Ժողովրդական պաշտպանի գրասենյակում անցկացված մամլո ասուլիսին ուղերձի տեքստը ներկայացրեց ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի գործադիր քարտուղար Իզաբելլա Օսիպովան:

# ԻԶԱԲԵԼԼԱ ՕՍԻՊՈՎԱՆ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

*Վրաստանի ազգային փոքրամասնությունների շուրջ 50 կազմակերպություն Իզաբելլա Օսիպովայի թեկնածությունն է առաջադրել Վրաստանի Հանրային հեռարձակման հոգաբարձական խորհրդի կազմում:*

Ինչպես ասված է համատեղ հայտարարության մեջ, քաղաքացիական ինտեգրման ոլորտում Հանրային հեռարձակման գործունեության մակարդակի բարձրացման նպատակով, նշանակալից է, որպեսզի հեռուստաընկերության հոգաբարձական խորհրդի կազմում լինի ազգային փոքրամասնության ներկայացուցիչ:

Վերոնշյալ ուղերձը ստորագրել են Վրաստանում գործող հայկական, ադրբեջանական, օսական, ասորական, ռուսական, ուկրաինական, գերմանական, լեհական, լիտվական եւ եզդիական կազմակերպությունները:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ված ենթակառուցային նախագծերը եւ առաջիկա ծրագրերը:

Մառնեուլիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր Լեւոն Հակոբյանը մեզ հետ զրույցում ասաց.

*- Հանդիպմանը բնակիչները հիմնականում բարձրացրին խմելու եւ ոռոգման ջրի, ճանապարհի եւ փողոցների լուսավորության հիմնախնդիրները:*

*Անդրադառնալով ընթացիկ տարում իրականացվող նախագծերի ցանկին՝ նշվեց, որ Շահումյան ավանում ներկայումս ընթացքի մեջ են ներպետական նշանակության Շահումյան-Ծերաքվի ավտոմոբիլային ճանապարհի վերանորոգման աշխատանքները: Նախագծի շրջանակներում, ասֆալտապատվելու է 5 կմ ճանապարհ: Նախագիծն իրականացվում է պետական բյուջեի ֆինանսավորմամբ, եւ դրա պայմանագրային արժեքը կազմում է 3672395 լարի: Ընթացքի մեջ է նաեւ Շահումյան ավանի մանկապարտեզի դահլիճի շինարարությունը, ինչի համար տեղական բյուջեից հատկացվել է 38136 լարի:*

*Անցյալ տարի Շահումյան ավանում իրականացվեց ներքին ճանապարհների վերանորոգում: Նախագծի շրջանակներում, ասֆալտապատվեց 2263 մետր ճանապարհ, ինչի համար ծախսվեց 310461 լարի: 2018 թվականի համար Շահումյանի ավանում ծրագրված է ներքին ճանապարհների վերանորոգման երկրորդ փուլը, ինչի համար առանձնացված է 409907 լարի:*



Հանդիպմանը ներկա էին Քվեմո Քարթլիի փոխնահանգապետեր Ա.Մետրեւելին եւ Զ.Դարգալին:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Քարթու» ֆոնդի վարչության նախագահ Նիկոլոզ Չխետիանու հետ, դիտեցին վերակառուցվող թատրոնի շենքը եւ կիսվեցին կարեւոր ու ուրախ նորություններով:

Հավաքվածներին հայտարարվեց, որ Վրաստանի մշակույթի եւ սպորտի նախարարության նախաձեռնությամբ ու «Քարթու» ֆոնդի ֆինանսական աջակցությամբ, աննախադեպ որոշում է կայացվել. Քեթեւան Ծամեբուլու թիվ 8-ում, այսօրվա թատրոնի հին շենքի փոխարեն, նոր, ժամանակակից չափանիշներով եւ բարձրորակ տեխնիկական սարքավորումներով թատրոնի շենք կառուցել:

Հաշվի կառնվեն հակահրդեհային, սեյսմիկ եւ այլ անվտանգության նորմերը, թատրոնը հարմարեցված կլինի սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց, կունենա ներքին բակ ու սրճարան: Կկառուցվի թատրոնի դահլիճը, բեմը եւ այլն:



ԳԵՐՄԱՆԻԱ

## ԱՆԳԵԼԱ ՄԵՐԿԵԼԸ ՉՈՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԱՆԸՆԴՄԵՋ ԸՆՏՐՎԵՑ ԿԱՆՑԼԵՐ

*Բունդեսթագի պատգամավորները մարտի 14-ին Քրիստոնեա-դեմոկրատական միության առաջնորդ Անգելա Մերկելին ընտրել են Գերմանիայի կանցլեր:*

*Այսպիսով, Մերկելը ԳԴՀ-ի կանցլերի պաշտոնը կզբաղեցնի չորրորդ ժամկետն անընդմեջ: Բունդեսթագում կայացած քվեարկության ընթացքում, նրա թեկնածությունը պաշտպանել են Բունդեսթագի 364 պատգամավորներ, «դեմ» է քվեարկել 315 խորհրդարանական: Եվս ինը պատգամավորներ ձեռնպահ են մնացել: Մարտի 14-ին Անգելա Մերկելը երդում է տվել Բունդեսթագում: Մինչ այդ, ԳԴՀ-ի նախագահ Ֆրանկ Վալտեր Շտայնմայերը նրան հաստատել է պաշտոնում գերմանական խորհրդարանում ընտրվելուց հետո:*

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

## ԱՐՏԱՔՍՈՒՄ ԵՆ ՌՈՒՍ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻՆ

*Մեծ Բրիտանիան 23 ռուս դիվանագետների կարտաքսի Սոլսբերիում ռուսական հետախուզության նախկին սպա Սերգեյ Սկրիպալի թունավորման կապակցությամբ: Այդ մասին հայտարարել է երկրի վարչապետ Թերեզա Մեյը:*

*Այս որոշումն ընդունվել է, քանի որ Մոսկվան չի պատասխանել Մեյի պահանջին՝ 24 ժամվա ընթացքում Լոնդոնին բացատրել, թե ինչպես է Ռուսաստանում մշակված թունավոր նյութը հայտնվել Բրիտանիայում: Մարտի 14-ի առավոտյան, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ Մոսկվան պատրաստ է Լոնդոնին պատասխան տալ Մեծ Բրիտանիայում ռուսական հետախուզության նախկին սպա Սերգեյ Սկրիպալի թունավորման գործով պաշտոնական հարցում ստանալու պահից 10 օրվա ընթացքում:*

*Մարտի 14-ին նաեւ հայտնի է դարձել, որ Սոլսբերիում տեղի ունեցած միջադեպի պատճառով Մեծ Բրիտանիան պահանջով գումարել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արտահերթ նիստ:*

ԱՄՆ

## ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆԸ

*ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը պաշտոնից ազատել է պետքարտուղար Ռեքս Թիլերսոնին: Նրա փոխարեն, այդ պաշտոնում նշանակվել է Կենտրոնական հետախուզական վարչության տնօրեն Մայք Պոմպեոն:*

*Պոմպեոյի թեկնածությունն այժմ պետք է հաստատվի ԱՄՆ-ի Կոնգրեսի Սենատի կողմից: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Կենտրոնական հետախուզական վարչության նոր տնօրեն է նշանակել Ջինա Հեսփելին:*

*- Ջինա Հեսփելը կդառնա ԿՀՎ-ի նոր տնօրենը, նա կլինի այդ պաշտոնում նշանակված առաջին կինը,- ասել է Թրամփը: Ներկայումս Հեսփելն զբաղեցնում է գերատեսչության փոխղեկավարի պաշտոնը:*

ԵՄ

## ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑԻՆ

*Եվրամիությունը, կապված ուկրաինական ճգնաժամի հետ, Ռուսաստանի 150 ֆիզիկական անձանց եւ 38 ընկերությունների նկատմամբ պատժամիջոցները երկարաձգել է վեց ամսով՝ մինչեւ սեպտեմբերի 15-ը: Պատժամիջոցների գործողության ժամկետը, որոնք 2014 թվականի մարտին սահմանվել են ՌԴ-ի եւ Ուկրաինայի քաղաքացիների նկատմամբ, լրանում է մարտի 15-ին: Պատժամիջոցները նկատի ունեն ակտիվների սառեցում եւ ճանապարհորդությունների հետ կապված սահմանափակումներ:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ԴՄԻՏՐԻ ՔՈՒՄՍԻՇՎԻԼԻ. «ԱՆՑՅԱԼ ՏԱՐԻ ՎԱՎԵՐԱՑՎԵՑ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ»



***Ինչպես հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլին, 2017 թվականին վավերացվել է օտարերկրյա անմիջական ներդրումների պատմական առավելագույնը:***

Հենվելով Վրաստանի վիճակագրական ծառայության տվյալների վրա՝ նախարարը նշեց, որ անցյալ տարի Վրաստանում օտարերկրյա անմիջական ներդրումները կազմել են 1861,9 միլիոն դոլար, ինչը 16,2 տոկոսով կամ 259,1 միլիոն դոլարով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Մինչ այդ, ինչպես նշեց Դմիտրի Քումսիշվիլին, օտարերկրյա առավելագույն ներդրումները վավերացվել էին 2014 թվականին՝ 1818 միլիոն դոլար:

Նշենք, որ վիճակագրական ծառայության տվյալներով, 2017 թվականի չորրորդ եռամսյակին երկիր է մուտք գործել 497,4 միլիոն ԱՄՆ դոլարի անմիջական ներդրում, ինչը 89,1 տոկոսով գերազանցում է 2016 թվականի ցուցանիշը:

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

## ԵՐԵՔ ՀԱԶԱՐ ԵՎՐՈ՝ ԵՐԿԻՐԸ ԹՈՂՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

***Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, կամավոր հայրենիք վերադառնալ ցանկացողներին առաջարկում է նյութական եւ ոչ նյութական օգնություն:***

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ԱԳ նախարարությունը, Գերմանիայի կառավարության եւ միգրացիայի միջազգային կազմակերպության համագործակցությամբ, իրականացվում է REAG/GARP-Reinntegration and Emigration Programme for Asylum-Seekers in Germany (REAG); Government Assisted Repatriation Programme (GARP) նախագիծը, որը նյութական եւ ոչ նյութական օգնություն է առաջարկում օտարերկրացիներին, այդ թվում՝ Վրաստանի քաղաքացիներին, ովքեր ցանկություն ունեն կամավոր վերադառնալ հայրենիք: Ծրագրի շրջանակներում, նախատեսվում է ինչպես ճանապարհածախսի մարում, այնպես էլ՝ տրվում է ֆինանսական լրացուցիչ օգնություն ստանալու հնարավորություն: Նախագծի համաձայն, սույն աջակցությունը տարածվում է միայն Վրաստանի այն քաղաքացիների վրա, ովքեր Գերմանիա են ժամանել մինչեւ անայցեգրային պայմանակարգի գործարկումը, մինչեւ 2017 թվականի մարտի 27-ը, ում մերժել էին ապաստարան շնորհելու խնդրանքը: Թեպետ, այն ժամկետը, որը համապատասխան գերատեսչությունները նրանց տվել էին, որպեսզի նրանք թողնեն երկիրը, դեռեւս չի սպառվել, այն անձանց, ում ապաստարանի խնդրանքի հարցի քննարկումը դեռեւս չի ավարտվել, նաեւ՝ Վրաստանի այն քաղաքացիներին, ում շնորհվել է փախստականի կարգավիճակ, սակայն, նրանք ցանկանում են վերադառնալ Վրաստան:

Հայրենիք կամավոր վերադառնալ ցանկացողները ծրագրի մասին մանրամասն տեղեկատվություն կարող են ստանալ տեղեկատվական կենտրոններում, որոնք գործում են Գերմանիայի ողջ մասշտաբով: Այդ կենտրոնների տեղադրավայրը իմանալու համար, հարկ է մուտք գործել https:/www.returningfromgermany.de/de/centres: Հետաքրքրվող անձինք կարող են մանրամասն տեղեկատվություն ստանալ նաեւ համացանցային www.returningfromgermany.de հասցեով՝ գերմաներենով, անգլերենով, ֆրանսերենով, ռուսերենով, աֆղաներենով, արաբերենով եւ պարսկերենով:

Նշենք, որ Եվրամիությունը հավանություն է տվել հանրակցությունում միգրացիոն ճգնաժամի դեմ պայքարելու համար լրացուցիչ 3,7 մլրդ եվրո հատկացնելու որոշմանը:

Եվրոպական ներդրումային բանկից նոր միջոցները կուղղվեն միգրացիոն այն նախագծերին, որոնք կոչված են «ռազմավարական եղանակով վերացնել միգրացիայի հիմնական պատճառները»: Այդ նախագծերը գործում են հիմնականում Եվրամիության սահմաններից դուրս այն երկրներում, որտեղից փախստականները ձգտում են հայտնվել հանրակցությունում:

ԵՄ-ի երկրներում միգրացիոն ճգնաժամի բարձրակետը 2015 թվականի անռանն էր: Այդ ժամանակվանից այն հանրակցության գլխավոր խնդիրն է, որը դարձավ նաեւ Եվրամիությունը լքելու Մեծ Բրիտանիայի քաղաքացիների որոշման պատճառներից մեկը: Այդ մի քանի տարվա ընթացքում, Բրյուսելը միգրացիոն ճգնաժամի դեմ պայքարելու համար հատկացրել է ավելի քան 10 մլրդ եվրո:

ԻՐԱՎԱԿԱՆ

## ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ԽՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԾԽԵԼՈՒ ԴԵՄ ՊԱՏԻԺՆԵՐԸ

***Ընթացիկ տարվա մայիսի 1-ից ուժի մեջ են մտնում հասարակական վայրերում եւ շինություններում ծխելն արգելելու մասին օրենքի կարգավորումները: Դրա խախտման համար սահմանված է 500-1000 լարիի տուգանք:***

Մայիսի 1-ից ծխելն արգելվում է ցանկացած նշանակության շինությունում, որտեղ կա հատակ, տանիք եւ առաստաղ, հասարակական տրանսպորտում (բացառությամբ՝ տաքսին եւ մոտորանավակը), ուսումնական, դաստիարակչական եւ ուսումնադաստիարակչական հաստատություններում, ուսումնական տարբեր հաստատություններում, գրադարաններում, մանկական ճամբարներում, մանկական ժամանցի կենտրոններում եւ մինչեւ 18 տարեկան անձանց համար նախատեսված հաստատությունների շենքերում, բժշկական եւ դեղագործական հաստատություններում եւ դրանց տարածքներում, բենզա եւ գազալցակայաններում, ինչպես նաեւ այն կառույցներում եւ դրանց տարածքներում, որոնք հրդեհավտանգ են համարվում:



Ծխելը թույլատրվում է ֆիզիկական անձի բնակության վայրում, ծխախոտի ծխի ուսումնասիրության հատուկ լաբորատորիաներում, պենիտենցիալ հաստատություններում, որտեղ ծխելու կարգը սահմանում է համապատասխան նախարարը, ժամանակավոր մեկուսարաններում, սիգար-բարերում, խաղատանը, օդանավակայանների տարանցիկ գոտու ծխելու համար հատուկ սենյակներում:

2020 թվականից ծրագրվում է ծխելն արգելել նաեւ խաղադաշտերում:

ԻՐԱՎԻՃԱԿ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԵԿ ԵՐՐՈՐԴԸ ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄ ՉԻ ԱՆՑԵԼ

***«Վրաստանում ավտոտրանսպորտային միջոցների պարտադիր տեխստուգման մասին» օրենքի ուժի մեջ մտնելուց երկու ամսվա ընթացքում (2018 թվականի հունվարի 1-ից մինչեւ փետրվարի 28-ը), տեխստուգման համապատասխան կենտրոններին դիմել է 11457 ավտոմեքենայի սեփականատեր:***

Ինչպես նշեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարար Գիորգի Չերքեզիշվիլին, տեխստուգումն անցնելու ցանկություն արտահայտածներից 2935-ը այն չի անցել: Ըստ փոխնախարարի, դա կազմում է հայտ ներկայացրածների 25 տոկոսը, թեպետ, նրա հավաստմամբ, տեխստուգում չեն անցել ներկայացված մեքենաների 30-32 տոկոսը:

Տեխստուգման քննությունից «կտրվելու» գլխավոր պատճառները չկարգավորված արգելակման եւ արտաթորման համակարգերն են, լույսերի տեղակայման նորմերի խախտումը: Այդ ավտոմեքենաների սեփականատերերին (նրանց ճնշող մեծամասնությունը՝ 2405-ը, իրավաբանական անձինք են) տրվել է անկարգությունների կարգավորման երկու լրացուցիչ ամիս:

Նշենք, որ Վրաստանում պարտադիր տեխնիկական ստուգումը վերացվել էր Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու օրոք եւ, կարգավորման մյուս կանոնների վերացման հետ միասին, ուղղված էր կոռուպցիայի դեմ պայքարի ուժեղացմանը: Տարեկան մեկ անգամ բոլոր ավտոմեքենաների տեխստուգման վերականգնումը պետք է ուժի մեջ մտներ 2015 թվականին, թեպետ այն ժամանակ դրա կիրարկումը հետաձգվեց:



### ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՔԱՌԱԿՈՂՄ ՀԱՄԱՏԵՂ ՀՌՉԱԿԱԳԻՐ

*Մարտի 15-ին Բաքվում Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի եւ Իրանի արտաքին գործերի նախարարներն ընդունեցին համատեղ հռչակագիր:*

*Նախարարների կողմից ստորագրված հռչակագրում նշված է, որ համաձայնվող կողմերը առանձին ոլորտներում, այդ թվում՝ ենթակառույցի, տրանսպորտի, գյուղատնտեսության, ընդլայնում են համագործակցությունը: «Չորս երկրները շարունակում են նախագծերի շուրջ աշխատանքը եւ հուսով են, որ, համատեղելով ջանքերը, կստեղծեն եւ կամրացնեն համագործակցության նոր ձեւաչափ, որը աշխարհի խոշոր տարածաշրջանները կկապի համատեղ արդյունավետ համագործակցությամբ»,- ասված է քառակողմ հռչակագրում:*

*ԱԳ նախարարների քառակողմ հաջորդ հանդիպումը կանցկացվի Վրաստանում:*

### ԹԱՆԴՈՅԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐՑՈՎ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

*Թանդոյանց եկեղեցու գործով Թբիլիսիի քաղաքային դատարանում մարտի 13-ին սկսված դատական նիստը հետաձգվել է: Դատարանը կողմերին պատրաստվելու ժամանակ է տվել: Վիրահայոց թեմը, Թբիլիսիի Թանդոյանց եկեղեցին թեմին կամ նախկին կարգավիճակին վերադարձնելու պահանջով, դիմել է դատարան՝ ընդդեմ Հանրային ռեեստրի ազգային գործակալության:*

*Դատական հաջորդ նիստը տեղի կունենա մայիսի 1-ին:*

### ԲԱՐԲԱՐՈՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՎԱԼԵՈՒՄ

*Մարտի 14-ին, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի Վալե գյուղի մոտ գտնվող Սուրբ Նինո կաթոլիկական եկեղեցու մոտակայքում, անհայտ անձինք վառել են եկեղեցու սրբապատկերներն ու գրքերը:*

*Ինչպես նշեց կաթոլիկական եկեղեցու վարդապետը, այրել են միայն կաթոլիկական սրբապատկերները: Տեղի ունեցածի դատապարտմամբ հանդես է եկել Ախալցիխեի եւ Տաո-Կլարջեթիի միտրոպոլիտ Թեոդորեն: Նա տեղի ունեցածը որակել է որպես վանդալիզմ:*

*Վրաստանի ՆԳ նախարարությունը սկսել է գործի հետաքննություն:*

### ՊԱՏԱՀԱՐ՝ ԳՈՒԴԱՈՒՐԻԻ ՃՈՊԱՆՈՒՂԻՈՒՄ

*Վրաստանի «Գուդաուրի» լեռնադահուկային առողջավայրում շարքից դուրս է եկել ճոպանուղին: Այդ մասին հայտնել է «Ռուսթավի 2» հեռուստաալիքը: Նախնական տվյալներով, անջատվել է օբյեկտի էլեկտրականությունը, ինչի հետեւանքով, նստարաններն սկսել են սահել եւ բախվել միմյանց: Դրա պատճառով, զբոսաշրջիկները հարկադրված են եղել բարձրությունից թռչել ձյան վրա: Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոն հայտնել է 11 տուժածի մասին: Նրանց բժշկական օգնություն է ցույցաբերվել:*

*- Վնասվածքները շատ լուրջ չեն, բացի երկու զբոսաշրջիկներից, որոնք Ուկրաինայից եւ Շվեդիայից են: Ներկայում Գուդաուրիում են գտնվում ռեանիմոբիլներ եւ, ամենայն հավանականությամբ, այդ երկու զբոսաշրջիկներին կփոխադրենք Թբիլիսի,- հայտարարել է նախարարը:*

*Միջադեպի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ:*

ՎՐԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ Է ՎԵՐԱՊԱՀՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հնարավորինը անել, որպեսզի թուլացնել լարվածությունը, եթե անգամ դա պետք է արվի մեր հեղինակության հաշվին:

Ընդհանրապես ցանկանում եմ ասել, որ այն անառողջ մթնոլորտը, որը ստեղծված է երկրում, երբ մեր հայրենասիրության եւ երկրի սիրո չափորոշիչը դարձրել ենք մեր հայտարարությունների սրությունը, կործանարար է: Նման մթնոլորտը քաղաքագետներին կարող է մղել այնպիսի քայլերի, որոնք երկրի համար կարող են բերել անուղղելի արդյունքների: Մենք պետք է հնարավորինս անենք երկրի շահերի հետեւողական ու անխախտ պաշտպանության համար, այն մանդատի կատարման համար, որը մեզ տվել է մեր բնակչությունը, եւ ապահովենք երկրի կայունությունը: Դա եղել, կա եւ մնում է մեր գլխավոր նպատակը, եւ, կրկնում եմ, այդ ուղղությամբ մենք կշարունակենք քայլեր կատարել,- հայտարարեց վարչապետը:

Անդրադառնալով իր ուղերձին ռուսական կողմի պատասխանին՝ վարչապետը նշեց.

- Այդ պատասխանում շատ հարցեր մեզ համար անընդունելի են, սակայն հարկ է ընդգծել՝ այդ պատասխանը երկխոսության համար տարածք է վերապահում: Գոյություն ունի Ժնեւի միջազգային բանակցությունների ձեւաչափը, եւ այդ ձեւաչափում մենք կիրականացնենք այն քայլերը, որոնք կհանգեցնեն թեկուզեւ փոքր առաջընթացի: Այդ փոքր առաջընթացը Վրաստանում կայունության աղբյուր է, եւ այս անհանգիստ աշխարհում, եթե ինչ-որ բան պետք է մեր երկրին, ապա դա կայուն իրավիճակում ապրելու հնարավորությունն է: Հուսով ենք, որ մեր բնակչության մեծամասնությունը սթափ կգնահատի այն, ինչ տեղի է ունենում մեր երկրում,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Հիշեցնենք, որ մարտի 9-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հատուկ ուղերձով դիմեց Ռուսաստանին՝ կոչ անելով համատեղ քայլեր ձեռնարկել երկկողմ հարաբերությունների նորմալացմանը: Նշելով, որ ընթացիկ տարվա օգոստոսին լրանում է երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների խզման տասը տարին, Գիորգի Կվիրիկաշվիլին նշել է, որ հարկ է ընտրություն անել այդ տարեթիվը դիմավորել փոխադարձ մեղադրանքներով եւ խիստ հայտարարություններով կամ «կատարել խելամիտ, թեկուզեւ ոչ մեծ քայլեր հարաբերությունները կախարդված շրջանից դուրս բերելու համար»: Ընդումին, վարչապետը կրկին ընդգծել է իր պատրաստակամությունը Ժնեւի միջազգային քննարկումների գործընթացին անձամբ ներգրավվելու հարցում:

Ուղերձում վարչապետը ռուսական կողմին կոչ է անում կառուցողական դիրքորոշում զբաղեցնել Ցխինվալիի անջատողականների կողմից զոհված Վրաստանի քաղաքացի Արչիլ Տատունաշվիլու աճյունը վրացական կողմին հանձնելու գործում:

Ի պատասխան ուղերձի, Ռուսաստանի ԱԳ նախարարությունը հայտարարել է, որ Ժնեւի բանակցություններում առաջընթացի մասին վարչապետի հիշատակումը «Վրաստանին հույս է ներշնչում մարտի վերջին անցկացվելիք բանակցությունների հաջորդ փուլում վրացական կողմի կառուցողական մոտեցման հարցում:

Ինչ վերաբերում է Ցխինվալիում զոհված Վրաստանի քաղաքացու աճյունի հանձնմանը, ապա Մոսկվան բավարարվել է միայն տեղի ունեցածի կապակցությամբ իր ցավակցության արտահայտմամբ:

ԻՐԱՎԱԿԱՆ

# ԽՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՌԱՆՁԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

*Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքում ծրագրված են փոփոխություններ:*




Համաձայն ՆԳ նախարարության տեղեկատվության, իրականացվելիք փոփոխությունները նախատեսում են ծառայական պարտականությունների կատարման ժամանակ իրավապահ մարմնի աշխատակցի, զինծառայողի, պետական պաշտպանության հատուկ ծառայության աշխատակցի, կատարողական ոստիկանության կամ պենիտենցիալ հատուկ ծառայության աշխատակցի, կամ դրանց հավասարեցված անձանց օրինական կարգադրությանը կամ պահանջին չենթարկվելու, կամ այդ անձանց բանավոր կամ այլ տեսակի վիրավորանք հասցնելու դեպքում, իրավախախտը կպատժվի հազարից մինչեւ չորս հազար լարիի գումարով կամ վարչական 15-օրյա արգելափակմամբ:

Նշենք, որ մինչ այդ նման իրավախախտման համար նախատեսված տուգանքը կազմում էր 250-ից մինչեւ 22 հազար լարի, կամ 15-օրյա վարչական արգելափակում:

ՆԳ նախարարության կողմից նախաձեռնած օրինանախագծի բացատրական թերթիկում նշված է, որ հասարակական անվտանգության տեսանկյունից, ներկայիս մարտահրավերները պահանջում են պետության կողմից համապատասխան արձագանք: Իսկ այսօր գործող պատժամիջոցները լրիվությամբ չեն իրականացնում վերապահված գործառույթները:

# «ՍԻԹԻ ՊԱՐԿ»-Ի ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՉԵՂԱՐԿՎՈՒՄ Է

*Թբիլիսիի քաղաքապետարանը ապրիլի 10-ից չեղարկում է «Սիթի պարկ» ընկերության հետ կնքած պայմանագիրը:*

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախի Կալաձեն, սույն որոշումը պայմանավորված է ընկերության կողմից պատասխանատու մոտեցումների եւ քաղաքացիական իրավասությունների թերացումով կատարման հետ: Քաղաքապետի խոսքով, չնայած բազում նախազգուշացումներին, ընկերությունը չէր կատարում ստանձնած պարտավորությունները, ինչը պարբերաբար հիմնախնդիրներ է ստեղծում կանգառումների կարգավորման եւ քաղաքացիների իրավունքների խախտման ոլորտում:

- Ելնելով դրանից՝ մենք որոշում ենք ընդունել 2018 թվականի ապրիլի 10-ին չեղարկել «Սիթի պարկ» ընկերության հետ գործող պայմանագիրը,- հայտարարեց Կալաձեն եւ հավելեց, որ մինչեւ կանգառումների նոր համակարգի ձեւավորումը, «Սիթի պարկի» գործառույթները կիրականացնի Թբիլիսիի տրանսպորտային ընկերությունը:

# ՍԱՌԸ ԶԵՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

*Այսուհետ, սառը զենք հնարավոր կլինի գնել կոնկրետ վայրերում, իսկ այն կկարողանան գնել միայն սահմանված կատեգորիաների քաղաքացները:*

Համապատասխան օրենսդրական փոփոխությունները Վրաստանի ՆԳ նախարարության կողմից արդեն մշակվել են եւ ներկայացվել կառավարության հաստատմանը:

Ինչպես պարզաբանեց Վրաստանի ՆԳ փոխնախարար Նաթիա Մերձվրիշվիլին, ծրագրվում է կարգավորման մեխանիզմներ ներդնել սառը զենքի վաճառքի հարցում: Կիրականացվի ռիսկ-խմբերի հստակեցումը, թե ում անթույլատրելի կլինի սառը զենքի վաճառքը: Նրա խոսքով, նոր օրինանախագիծն ուղղված է սառը զենքի ապօրինի շրջանառության հիմնախնդրի կարգավորմանը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆ. «ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԿԱՐՏՈՖԻԼԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)



Եվ ահա, մարտի 15-ին, վերոնշյալ հիմնախնդրի կապակցությամբ, Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջաններից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը, Ախալքալաքի քաղաքապետ Յուրիկ Ունանյանի, մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանի հետ, մունիցիպալիտետի վարչության նիստերի դահլիճում հանդիպում ունեցավ տեղի սակրեբուլոյի պատգամավորների, ֆերմերների, գյուղերի լիազորների, մասնագետների եւ բնակչության ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը, Հենզել Մկոյանը իր խոսքում, անդրադառնալով այս օրերին երկրամասի բնակչությանն ամենաշատ հուզող կարտոֆիլի իրացման խնդրին, նշեց, որ համատեղ աշխատանքի շնորհիվ, երկրի կառավարությունն արդեն որոշում է ընդունել արտասահմանից Վրաստան կարտոֆիլի ներմուծումն արգելելու մասին:

- Այդ թեմայով անձամբ ես հանդիպումներ եմ ունեցել գյուղատնտեսության եւ բնապահպանության նախարարի, կառավարության մյուս անդամների, իսկ մարտի 14-ին՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հետ: Նրան ներկայացրի ստեղծված իրավիճակը: Վարչապետը հավաստիացրեց, որ գործադիր իշխանությունը, որը նպատակամղված քայլեր է ձեռնարկում տեղական արտադրության ծավալների ու իրացման ավելացման ուղղությամբ, հնարավորինը կանի բարձրացված հիմնախնդրի կարգավորման եւ ախալքալաքցի կարտոֆիլագործներին օպերատիվ կերպով օգնելու համար:

Ախալքալաքի մունիցիպալիտետի վարչության շենքում կայացած հանդիպման ավարտից հետո, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը մեզ հետ հեռախոսազրույցում ասաց, որ նոր ստացված տեղեկատվության համաձայն, մարտի 15-ին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին արդեն ստորագրել է «Անվտանգության ապահովման անհապաղ միջոցառումների նպատակով Վրաստանի տարածք Թուրքիայից ֆիտոսանիտարական հսկողության ներքո գտնվող մթերքի ներմուծման ժամանակավոր արգելքի մասին» կառավարության որոշումը:

- Իսկ ի՞նչ է ասված այդ որոշման մեջ:

- Կարդում եմ. «Ֆիտոսանիտարական սահմանային հսկողության եւ անասնաբուժական սահմանային վերահսկողության իրականացման կարգի հաստատման մասին» Վրաստանի կառավարության 2010թ. դեկտեմբերի 31-ի թիվ 429-ի որոշմամբ հաստատված Ֆիտոսանիտարական սահմանային հսկողության իրականացման կարգի 17-րդ հոդվածի համաձայն, Վրաստանի տարածքում վնասակար օրգանիզմների, մասնավորապես, կարտոֆիլի քաղցկեղի տարածումը կանխելու նպատակով, ցանքի ժամանակաշրջանում Թուրքիայից կարտոֆիլի ներկրումը Վրաստան մինչեւ սույն թվականի հունիսի 1-ը կարգելվի:

Հեռախոսազրույցի ավարտին, Հենզել Մկոյանը ընդգծեց, որ սույն որոշմամբ, երկրի գործադիր իշխանությունը իրատեսական քայլ է արել ախալքալաքցի երկրագործների համար կենսական նշանակության հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*

